ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.: (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 25 ՀՈՒԼԻՍԻ 2016Թ.
№ 21 (397)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ՖՈՏՈԼՈՒՐ

Ստեղծված իրավիճակից դուրս գանք այն դռնով, որի անունն է երկխոսություն եւ փոխզիջում

21 հուլիսի 2016թ.

Երեւանում հուլիսի 17-ին բռնկված խռովությունը շարունակում է մնալ չհանգուցալուծված: Եվ հայ ժողովուրդն անհանգիստ սպասումի օրեր է ապրում:

Ստեղծված իրավիճակում գոհության արժանի մի երեւույթ կա միայն՝ ո՛չ իշխանությունները, ո՛չ ապստամբներն իրավիճակի հետագա սաստկացման չեն գնում…

Ուզում ենք հավատալ, որ մինչեւ վերջ էլ այդ մոտեցումը գերիշխող կմնա, եւ հանգույցը կլուծվի բացառապես բանակցությունների, երկխոսության, փոխզիջման ճանապարհով…

Մանավանդ որ փողոցն էլ արդեն իսկ հաղորդակից է խռովությանը: Հուլիսի 19-ի եւ 20-ի գիշերային անցուդարձը ցույց տվեց, որ ժողովրդական զանգվածների դերը մեծանալու եւ ինչ-որ փուլում վճռորոշ է դառնալու՝ հանգուցալուծման անորոշությունը ձգձգվելու դեպքում:

Իհարկե, չենք հավատում, որ այս օրերին տեղի ունեցողից պատշաճ եզրակացություններ կարվեն, կամ կատարվածի իրական պատճառները ջրի երես կհանվեն, ինչպես որ եզրակացություններ չարեցինք Արցախյան քառօրյա պատերազմից հետո:

Բայց, չսպասելով այդ ամենին, անկարելի է դիրքորոշում չհայտնել մի քանի արտառոց երեւույթների վերաբերյալ, որոնք ակնհայտորեն երեւում են այս օրերին եւ մտածելու տեղիք տալիս:

Ինչպիսի հորջորջումով ու պիտակով էլ

էջ 2

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «…Հանգուցալուծումը տեղի է ունենալու Հայաստանի Հանրապետության սահմանադրության եւ օրենքների խստիվ պահպանմամբ»

ՀՀ նախագահի ելույթը հանրապետության իրավապահ մարմինների ղեկավարների մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդակցությունում

Հայաստանի Հանրապետության նախագահի մոտ տեղի է ունեցել խորհրդակցություն ազգային անվտանգության ծառայության, ոստիկանության, դատախազության եւ քննչական մարմինների ղեկավարների մասնակցությամբ: Երկրի ղեկավարին ներկայացվել է 2016թ. հուլիսի 17-ին ՀՀ ոստիկանության պահակապարեկային գնդի տարածքում տեղի ունեցած զինված հարձակման եւ դրան հաջորդած իրադարձությունների մանրամասները, ինչպես նաեւ իրականացվող միջոցառումների արդյունքները:

Հանրապետության նախագահին զեկուցվել է նաեւ, որ պահակապարեկային գնդի տարածքում պահվող պատանդներին ազատ արձակելու, զինված խմբի անդամների կողմից զենքը վայր դնելու եւ իշխանություններին հանձնվելու նպատակով շարունակաբար վարվում են ակտիվ բանակցություններ, ձեռնարկվում են իրավիճակից թելադրվող այլ անհրաժեշտ գործողություններ:

Հանրապետության նախագահն ընդգծել է՝ ստեղծված իրավիճակին խաղաղ հանգուցալուծում տալու համար պետք է ձեռնարկվեն հնարավոր բոլոր միջոցները, կարեւո-

էջ 2

Գերագույն ներդաշնակությունը մի կաթիլ արցունքը չարժե այն տանջված երեխայի, որ իր փոքրիկ բռունցքով կուրծքն է ծեծում…

Ֆ.ԴՈՍՏՈԵՎՍԿԻ

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ. «Դափեք ինքներդ»

Ցանկացած պետություն, ազգ կամ հասարակություն, իր բազմազան ներքին տարաձայնություններով ու հակառակություններով հանդերձ, երբ հայտնվում է հայրենիքին սպառնացող արտաքին մարտահրավերի առջեւ, որպես կանոն, ամեն ինչ ժամանակավորապես մի կողմ է դնում եւ միահամուռ կերպով լծվում այդ մարտահրավերի դիմակայման գործին:

Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո հայ ժողովուրդն, ահա, կանգնած է այդպիսի մարտահրավերի, այն է՝ արցախահայության անվտանգության ապահովման եւ Ղարաբաղյան հակամարտության բարեհաջող կարգավորման գերակա խնդրի առջեւ, որն իր կարեւորությամբ ստվերում է հայ ժողովրդին հուզող բոլոր մնացյալ հարցերը:

Ըստ այդմ, ներկա պահին իշխանությունների, կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, վերլուծաբանների, լրագրողների յուրաքանչյուր քայլ, խոսք կամ գործողություն անհրաժեշտ է գնահատել բացառապես այդ գերակա խնդրին նպաստելու կամ վնասելու տեսանկյունից:

Ցավոք, սակայն, սեփական խոսքերի ու գործողությունների գնահատման տվյալ չափանիշի կարեւորությունը շատերի կողմից, կարծես թե, չի գիտակցվում եւ, որ ավելի վտանգավոր է, արտաքին մարտահրավերի դիմակայման հրամայականի թելադրանքով ներքին խնդիրները մի կողմ դնելու եւ համախմբվելու՝ հասուն պետություններին, ազգերին ու հասարակություններին հատուկ վերը հիշատակված ոսկե կանոնը մեզ մոտ առայժմ չի գործում, ինչը կարող է մեզ հասցնել ազգային աղետի:

Վերացական մտքեր արտահայտելու մեջ չմեղադրվելու եւ անառարկայական չդիտվելու համար նշեմ Ղարաբաղում եւ Հայաստանում վերջերս տեղի ունեցած հետեւյալ երեք կոնկրետ իրադարձությունները.

1. որոշ անպատասխանատու քաղտեխնոլոգների կողմից իրականացված «Սամվել Բաբայան» սադրիչ օպերացիան, որը մի քանի օր անտեղի հուզումներ առաջացրեց Ղարաբաղում,

2. շուրջ երկու տասնյակ վերլուծաբանների, քաղաքական գործիչների եւ նախկին բարձրաստիճան դիվանագետների մասնակցությամբ Շուշիում գումարված մարտաշունչ համաժողովը, որի օգտակարությունը կասկածի տակ չէր դրվի, եթե նիստից հետո այդ գերհայրենասեր ժողովականներն անմիջապես կամուֆլյաժներ հագնեին ու դիրքավորվեին Թալիշի մատույցներում,

3. եւ վերջապես, զինված խմբի կողմից ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի դեմ կատարված հարձակումը եւ դրա հետեւանքով այս օրերին Երեւանում ստեղծված գերլարված իրավիճակը:

Ես չեմ ցանկանում նշված իրադարձությունների վերաբերյալ ավելի ընդարձակ գնահատականներ տալ եւ իմ տեսակետը պարտադրել հասարակությանը: Յուրաքանչյուր ոք, վերոնշյալ գերակա խնդիրը նկատի ունենալով, թող ինքը դատի, թե՝

ա. որքանով են դրանք նպաստում կամ վնասում արցախահայության անվտանգության ապահովման եւ Ղարաբաղյան հակամարտության բարեհաջող կարգավորման խնդրին,

բ. որքանով են ուժեղացնում կամ թուլացնում հայկական դիվանագիտության դիրքերը տվյալ խնդրին նվիրված ընթացիկ բանակցու-

էջ 2

Ստեղծված իրավիճակից դուրս գանք այն դռնով, որի անունն է երկխոսություն եւ փոխզիջում

ՖՈՏՈԼՈՒՐ

էջ 1 բնութագրենք (փորձենք բնութագրել) կատարվածը, միեւնույնն է, իրողության բուն էությունը չենք կարող փոխել կամ աղավաղված ներկայացնել: Իսկ իրողությունն այն է, որ հուլիսի 17-ին բռնկված խռովությունը դանդաղ, բայց եւ հետեւողականորեն վերածվում է քաղաքական ճգնաժամի՝ սոցիալական բազմաթիվ բաղադրիչներով:

Եվ զարմանալի է ու տարօրինակ, որ քաղաքական ճգնաժամի այս օրերին երկրի թիվ 1 քաղաքական ատյանը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, լուռ է, իսկ ավելի ճիշտ՝ չկա: Մեր պատգամավորների դալբության մասին, իհարկե, գիտեինք ի սկզբանե (բացառությամբ մի քանիսի), բայց այսչափ անդեմություն, այսպիսի անգո (չգո) վիճակ չէինք պատկերացնում:

Որերորդ անգամ ակնհայտ դարձավ մեր քաղաքական ուժեր կոչվածների՝ կուսակցությունների ողորմելի ու թշվառ էությունը: Ու դա այն դեպքում, որ մի քանի ամիս հետո երկիրն անցնում է կառավարման նոր համակարգի՝ կուսակցապետության՝ խորհրդարանական կառավարման:

Չափազանց մտահոգիչ են գործադիրին պատած շփոթվածությունն ու անորոշությունը, հատկապես առաջին դեմքերի պահվածքը:

Մեր հովվապետն էլ, որերորդ անգամ, իր հոտի հետ չէ…

Իրավիճակի ողբերգականությունն ավելի է ընդգծվում, երբ կողքից նայում ենք պետական քարոզչամեքենայի պահվածքին: Մայրաքաղաքից սփռվող հեռուստածրագրերի հերոսները դարձյալ լժե մտավորականներն են, նրանք, ովքեր բոլոր ընտրություններից եւ բոլոր իրադարձություններից առաջ մեզ դաս են տալիս, ովքեր հանրաքվեից առաջ մեզ սահմանադրություն էին «բացատրում», ովքեր քառօրյա պատերազմի օրերին ծպտվում էին զինվորական հանդերձանքով, ովքեր… Ինչ-որ դիմում-նամակի տակ դարձյալ մեր երգչուհիներն են՝ մտավորականի փարաջայով, իսկական երգարվեստից հեռացած, ժողովրդից ու Հայաստանի իրականությունից օտարված:

Լավ, ուրիշ էլ ի՞նչ պատահեր, որ կարողանայինք առերեսվել իրականության եւ իրական Հայաստանի հետ:

Այս ամենով հանդերձ, մեզ թվում է, ստեղծված իրավիճակում կա մի ելք՝ երկխոսություն կողմերի միջեւ ու փոխզիջում: Դա է ելքը, որտեղով դուրս գալու դեպքում պարտվողներ չեն լինի մեզանում՝ ամենամեծ փոխզիջումների դեպքում անգամ: Ընդհակառակը՝ կլինեն հաղթողներ: Այդ հաղթողները կլինենք բոլորս, կլինեն Հայաստանի Հանրապետությունը, հայոց պետականությունը…

Ուրեմն՝ ստեղծված իրավիճակից դուրս գանք այն դռնով, որի անունն է երկխոսություն եւ փոխզիջում…

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՖՈՏՈԼՈՒՐ

Ինչպես տեղեկանում ենք մայրաքաղաքային լրատվամիջոցներից, հուլիսի 23-ին ազատ են արձակվել ՊՊԾ գնդում պահվող պատանդ ոստիկանները:

* * *

Հուլիսի 24-ի երեկոյան «Սասնա ծռեր» խմբավորման անդամները ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի տարածքում ոստիկանական մեքենա են այրել՝ ի նշան բողոքի, որ իրենց սննդով չեն ապահովում, ինչպես նաեւ արտաքին կապն իրենց հետ շատ թույլ է, հոսանք չկա, իսկ հուլիսի 23-ի ժամը 24-ից վիրավորված անձին բժշկական օգնություն չի ցուցաբերվում:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «…Հանգուցալուծումը տեղի է ունենալու Հայաստանի Հանրապետության սահմանադրության եւ օրենքների խստիվ պահպանմամբ»

էջ 1 րել է ենթադրյալ բոլոր իրավախախտումների համակողմանի եւ անաչառ քննությունը, ինչպես նաեւ մեղավորների համար պատժի անխուսափելիության ապահովումը: Խորհրդակցության արդյունքներով իրավապահ մարմինների ղեկավարներին տրվել են անհրաժեշտ հանձնարարականներ:

«Մինչ մեր հերթական խորհրդակցությունը սկսելը մեկ անգամ եւս փաստենք, որ մեր երկիրն այս օրերին ապրում է դժվարին եւ պատասխանատու օրեր: Պատճառներին, իհարկե, այս պահին չեմ անդրադառնալու: Հիմա դրա ժամանակը չէ: Կասեմ միայն, որ բոլորս պետք է սրանից դասեր քաղենք:

Մեկ անգամ եւս ցավակցում եմ զոհված գնդապետ Արթուր Վանոյանի ընտանիքին եւ հարազատներին: Բոլորս պարտք ունենք նրա առաջ: Մենք պետք է անենք ամեն ինչ, որպեսզի այս բարդ իրավիճակը կարգավորվի եւ նման ողբերգություն այլեւս չկրկնվի:

Այս վիճակի ակունքում է մեր իրողության մեջ ամենավտանգավոր մտայնությունը՝ հարցերը լուծել բռնությամբ եւ ուժի կիրառմամբ: Այս մտայնության հետագա զարգացումը հղի է շատ վտանգավոր հետեւանքներով հենց մեր երկրի եւ պետականության համար:

Հայաստանում բռնի ուժով, հարձակումով եւ պատանդ վերցնելով հարցեր չեն լուծվելու: Եվ դա երբեք մենք թույլ չենք տալու: Այս իրավիճակի հանգուցալուծումը պետք է լինի Հայաստանի եւ մեր հասարակության, պետության հասունության կարեւորագույն քննություն:

Ոստիկանության պարեկապահակային գնդի տարածքը գրաված զինյալներին կոչ եմ անում ցուցաբերել զսպվածություն եւ իրենց սադրիչ գործողություններով չվտանգել ուրիշների կյանքը:

Պատանդները պետք է ազատ արձակվեն:

Զինված խումբը պետք է վայր դնի զենքը:

Հետագա հանգուցալուծումը տեղի է ունենալու Հայաստանի Հանրապետության սահմանադրության եւ օրենքների խստիվ պահպանմամբ:

Անձնական վրեժխնդրության բոլոր փորձերը կասեցվելու են օրենքի ուժով:

Այո՛, Հայաստանում դժգոհներ շատ կան: Սակայն թող ոչ ոք չսխալվի եւ չմտածի, որ կարող է որեւէ առիթ կամ պատճառ շահագործել մեր պետականության հիմքերը քայքայելու համար:

Հորդորում եմ մեր հանրության բոլոր ներկայացուցիչներին իրենց քաղաքական եւ քաղաքացիական իրավունքներն իրացնել բացառապես խաղաղ եւ օրենքի շրջանակներում: Հորդորում եմ նաեւ, որ տուրք չտան ծայրահեղ քայլեր եւ սադրանքներ հրահրող անձանց առաջարկներին եւ գաղափարներին: Դա հղի է նոր մարդկային կորուստների լուրջ վտանգով:

Հորդորում եմ, որ յուրաքանչյուր ոք գիտակցի այդ սադրանքներից եւ ծայրահեղ քայլերից բխող իրական վտանգները:

Հանձնարարում եմ ձեզ՝ իրավապահ մարմինների ղեկավարներիդ, որպեսզի ձեր գործունեությունը շարունակեք իրականացնել խստագույն զսպվածությամբ՝ օրենքի շրջանակներում:

Մենք շարունակում ենք ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցներն իրավիճակին վերջնական խաղաղ հանգուցալուծում տալու համար:

Կրկին կոչ եմ անում զինված խմբին՝ ժամ առաջ վայր դնել զենքը:

Մենք գործում ենք եւ գործելու ենք համբերատար: Մեր երկրի յուրաքանչյուր քաղաքացու կյանքը եւ առողջությունը թանկ է մեզ համար:

Մենք չենք գնացել այսպիսի իրավիճակներում դասական համարվող ճանապարհով: Սրանով մենք հնարավորություն ենք տվել զինված խմբին հետքայլ կատարելու համար: Հուսով եմ, որ նրանք կսթափվեն:

Բայց մենք իրավունք չունենք թույլ տալու, որ մեր ողջ հանրությունն այս լարվածության պատանդը դառնա:

Կարծում եմ, որ այս իրավիճակն արդեն ավելի երկար է տեւում, քան մենք կարող ենք մեզ թույլ տալ: Ապրիլ ամսից դեռ այնքան շատ ժամանակ չի անցել, որպեսզի մեր հասարակությունն իրեն թույլ տա մոռանալու տեղի ունեցածի մասին:

Մեկ անգամ եւս բոլորիս զգոնության եւ զսպվածության կոչ եմ անում՝ հանուն Հայաստանի Հանրապետության, հանուն մեր ժողովրդի ապագայի», – ասել է ՀՀ նախագահը խորհրդակցության ժամանակ:

president.am, 22.07.2016

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ. «Դապեք ինքներդ»

ՖՈՏՈԼՈՒՐ

էջ 1 թյուններում:

Բայց որպեսզի տպավորություն չստեղծվի, թե խուսափում եմ կոնկրետ դրված հարցի պատասխանից, ասեմ.

- այսօր անհմաստ է վերլուծել այն պատճառները, որ հանգեցրել են մի այնպիսի ծայրահեղ քայլի, ինչպիսին է պետական հիմնարկության դեմ ուղղված զինված գործողությունը,
- վերլուծությունները պետք է կատարվեն եւ տեղի ունեցածից դասեր քաղվեն ստեղծված գերվտանգավոր իրավիճակի հանգուցալուծումից հետո: Ներկա պահին դրանք միայն գրգռություններ են առաջացնում եւ ավելի եւս բարդացնում իրավիճակը,
- բնականաբար, ամեն կերպ անհրաժեշտ է խուսափել նոր արյունահեղությունից եւ խնդիրը լուծել բանակցությունների միջոցով, որքան էլ դրանք դժվար լինեն եւ ողջամիտ ժամանակ պահանջեն,
- անհմաստ է բարոյախրատական քարոզներ կարդալ եւ հայրենասիրության դասեր տալ Ժիրայր Սեֆիլյանին եւ նրա զինակիցներին: Նրանց հայրենասիրությունն ապացուցման կարիք չունի: Նրանք դա ապացուցել են ռազմի դաշտում, անձնազոհաբար ու կամովին մասնակցելով արցախյան պատերազմին,
- որքան էլ տաքարյուն ու ծայրահեղական թվացող, իմ շփումներից ես համոզվել եմ, որ ճգնաժամային պահերին Ժիրայր Սեֆիլյանն ունակ է սառը դատել ու ողջամիտ որոշումներ կայացնել: Ուզում եմ հույս հայտնել, որ այս անգամ էլ այդ ունակությունը նրան չի դավաճանի, եւ նա Ղարաբաղի ու Հայաստանի ճակատագիրը վեր կդասի ամեն ինչից:

22.07.2016թ.

Գազիֆիկացում

ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ.

«Տասը տարում մարզի բաժանորդների թիվը գրեթե կրկնապատկվել է՝ 13200-ից հասնելով մոտ 25000-ի»

Սյունիքի մարզի գազիֆիկացման ընդհանուր պատկերի, գազի որակի եւ կալորիականության, ինչպես նաեւ սահմանված նոր սակագների նպատակահարմարության մասին է զրույցը «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության Սյունիքի գազիֆիկացման եւ գազամատակարարման մասնաճյուղի տնօրեն Արթուր Խաչատրյանի հետ:

– Պարո՛ն Խաչատրյան, մինչեւ մեր զրույցի բուն ընթացքին անցնելը վերհիշենք Սյունիքի մարզի գազիֆիկացման ընդհանուր պատկերը:

– Ընդհանուր առմամբ Քաջարանի տարածքային տեղամասում գազիֆիկացված է 11 համայնք՝ 12176 բաժանորդով, որից՝ Կապանի հատվածում 5 համայնք՝ 10011 բաժանորդով, Քաջարանի հատվածում՝ 6 համայնք՝ 2165 բաժանորդով, Գորիսի տարածքային տեղամասում՝ 12 համայնք՝ 7359 բաժանորդով, Սիսիանի ՏՏ-ում՝ 15 համայնք՝ 5307 բաժանորդով: Մեղրու տարածաշրջանում բաժանորդ են Մեղրու մաքսակետը, Ագարակի զորամասը, Մեղրու ռուսական սահմանապահ ջոկատը եւ մեկ ավտոգազալիցքավորման ճնշակայան:

Հունիսի 20-ին լրացավ իմ պաշտոնավարման տասը տարին, եւ պետք է արձանագրեմ, որ այս ընթացքում մարզի բաժանորդների թիվը կրկնապատկվել է՝ 13200-ից հասնելով մոտ 25000-ի:

Մարզի խոշոր գազասպառողներն են (ամսական 10 հազար խորանարդ մետր եւ ավելի սպառում ունեցող) «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն, «Վայբլ» ՍՊԸ-ն, ավտոգազալիցքավորման ճնշակայանները (մարզում՝ թվով 13), որոշ հանրակրթական դպրոցներ եւ հացի փռեր, որոշակի տարեշրջանում՝ մի քանի ջերմոցները, ինչպես նաեւ որոշ ասֆալտգործարաններ՝ կանոնավոր աշխատելու դեպքում:

– ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող բնական գազի համար սահմանել է նոր սակագին, որ ուժի մեջ կմտնի 2016թ. հուլիսի 1-ից: Ձեր գնահատականը եւ կանխատեսումը՝ որքանո՞վ գազասպառումը կդառնա ավելի ձեռնտու սպառողների համար:

– ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ մայիսի 31-ի կայացած նիստում քննարկվել են «Բնական գազի փոխադրման սակագնի, գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման եւ բնական գազի բաշխման սակագների, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագների սահմանման մասին» հարցերը: Հանձնաժողովը, քննարկելով վերը նշված հարցերը, որոշել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող բնական գազի համար սահմանել հետեւյալ սակագները՝ ամսական մինչեւ 10 հազար խոր. մետր սպառում ունեցող բաժանորդներին վաճառվող բնական գազի սակագինը՝ 146.7 դրամ՝ սպառված յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի համար (ներառյալ ԱԱՀ-ն), ամսական 10 հազար խորանարդ մետր եւ ավելի սպառում ունեցող սպառողներին վաճառվող բնական գազի սակագինը՝ 257.56 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ սպառված յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի համար (ներառյալ ԱԱՀ-ն):

Իմ կարծիքով՝ սահմանված նոր սակագինը ռեալ է, եւ այս տարիների ընթացքում որակյալ գազամատակարարման նպատակով իրականացված ներդրումները լիովին արդարացնում են սահմանված գինը: Սահմանված սակագնի վերանայում հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը մշտապես կատարում էր, բայց այս անգամ այնքան հստակ է հաշվարկվել այն, որ փաթեթում «սխալ» չի գտնվել:

Պարբերաբար կատարվում է մեքենա-մեխանիզմների պարկի թարմացում, ներկվում են գազատար խողովակները, շենքերի մուտքագծերի կանգնակները եւ մի շարք այլ աշխատանքներ են իրականացվում, որոնց շնորհիվ բարելավվում է գազամատակարարման եւ գազասպառման որակը, տեսքի բերվում գազացանցը: Ստացած գազի ծավալը եւ մեր ծախսերը հաշվի առնելով՝ կարելի է արձանագրել, որ մարզում մեր ընկերությունը դեռեւս շահույթով չի աշխատում: Իմ կարծիքով՝ սակագնի 10%-ով նվազեցմամբ կածի բաժանորդների թիվը, ինչն էլ կհանգեցնի գազի ծավալի ավելացման:

– Կարո՞ղ ենք որոշակի պատկերացում կազմել Սյունիքի մարզում գազի սպառման ծավալների մասին, ասենք, վերջին 2-3 տարվա կտրվածքով:

– Բաժանորդների թվի աճին զուգահեռ, բնականաբար, ավելացել է նաեւ մարզին հատկացվող գազի ծավալը, ինչին նպաստել է նաեւ ԱԳԼԵԿ-ների կառուցումը: Եղանակային պայմաններով պայմանավորված՝ տարվա տարբեր ամիսներին, նախորդ տարիների հետ համեմատ, որոշակի տատանումներ են լինում՝ կա՛մ նվազում, կա՛մ ավելանում է սպառված գազի ծավալը: Մարզում ունենք 25 հազարից ավելի բաժանորդ, որից՝ 2000 փակ դուռ: Ասենք՝ տվյալ բնակարանի տերը գտնվում է արտերկրում եւ հայրենիք գալով՝ դիմում է բնակարանը գազիֆիկացնելու համար, բայց նա նորից մեկնում է եւ հետեւաբար չի սպառում գազ: Կան բնակիչներ, ովքեր գազազրկման դիմում են ներկայացրել, որովհետեւ թեկուզ մեկ խոր. մետր գազ սպառելու դեպքում սպասարկման գումար պետք է վճարեն:

– Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ գազիֆիկացված համայնքներում շատ հաճախ սպառողը գերադասում է բնակարանը ջեռուցել ավանդական եղանակով՝ աթարով կամ փայտով, քանի որ մատչելի չեն սպառման սակագները եւ դա հատկապես 2013թ. հուլիսի 7-ից հետո: Իսկապե՞ս այդպես է:

– Գյուղերում սպառումը քիչ է, եւ պատճառը մարդկանց սոցիալական ծանր վիճակն է: Եթե գյուղացին հնարավորություն ունի աթարով կամ փայտով տաքանալու, բնականաբար այդ գումարը չի տա գազի սպառման համար: Սիսիանում եւ Գորիսում, որոշակի տարեշրջանով պայմանավորված, գազասպառումն ավելանում է. Սիսիանում՝ կաթ տաքացնելով, Գորիսում՝ օղի թորելով, բայց բնակարանները շարունակում են ջեռուցել ավանդական եղանակով: Խանածախ, Խոզնավար եւ Վաղատուր համայնքները, չնայած գազիֆիկացվել են IFAD-ի միջոցներով, բայց այնտեղ դեռեւս, կարելի է ասել, բաժանորդ չունենք (եթե այդ երեք գյուղից ընդամենը երեք հոգի է դիմել բաժանորդ դառնալու համար, նշանակում է՝ բաժանորդ չունենք): Բայց մարզում կան գյուղեր, որտեղ 400 եւ ավելի գազասպառող կա: Դժվարը սկիզբն է. եթե համայնքը գազիֆիկացվել է կառավարության կամ առանձին դոնոր կազմակերպությունների միջոցներով, ապա բնակիչը պետք է գումար վճարի իր գազատարի կառուցման համար:

– 2014թ. հունվարի 6-ից «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն դարձավ «Գազպրոմ Արմենիա»՝ մեր հանրապետության ունեցած 20% բաժնեմասը («Հայռուսգազարդ»-ի) Ռուսաստանի Դաշնությանը վաճառելով:

Դրանից հետո կառուցվածքային եւ այլ բնույթի ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան Սյունիքի գազիֆիկացման եւ գազամատակարարման մասնաճյուղում:

– Զգալի փոփոխություններ տեղի ունեցան՝ սկսած մեքենա-մեխանիզմների պարկի թարմացումից (եռակցման նոր ագրեգատներ, մեքենա, որ իր կահավորանքով հիշեցնում է արհեստանոց՝ անհրաժեշտ բոլոր սարքավորումներով, «1-04» ծառայության նոր մեքենա եւ այլն), շենք-շինությունների տանիքների վերանորոգումից մինչեւ աշխատավարձերի բարձրացում եւ պարգեւավճարների տրամադրում: Վերոնշյալ գործարքից հետո փոխվեց նաեւ ընկերության ներքին կանոնադրությունը: Աշխատողների կրճատում տեղի չի ունեցել, աշխատավարձը բարձրացել է մոտ 50%-ով, հունվարից էլ նախատեսվում է աշխատավարձի ավելացում: Աշխատելաոճի մեջ նույնպես կատարվել են փոփոխություններ. շատ մեծ ուշադրություն են դարձնում նեղ մասնագիտական կրթությանը, ինչպես նաեւ խստացվել են մի շարք պահանջներ:

– Ընթացիկ եւ առաջիկա մեկ-երկու տարում մարզում գազիֆիկացման ի՞նչ ծրագրեր ունեք:

– Այսօրվա դրությամբ չկա գյուղ, որտեղ գազիֆիկացման աշխատանքներ են իրականացվում: Գիտե՞ք ինչ, սա բիզնես հետապնդող ընկերություն է եւ գումար ներդնել տարածքի գազիֆիկացման համար, այն էլ այն դեպքում, երբ համապատասխան քանակով բաժանորդ հնարավոր չէ ունենալ, ձեռնտու չէ: Բայց եթե տվյալ համայնքը գազիֆիկացման աշխատանքների համար ներդնի ասենք 80%, ապա չի բացառվում, որ ընկերությունը մնացորդ գումարը տրամադրի: Ռեալ բաժանորդների թիվ ներկայացնելու դեպքում հնարավոր է եւ ընդառաջենք:

– Ի՞նչ ընթացքի մեջ են Մեղրու տարածաշրջանի գազաբաշխման ցանցի կառուցման աշխատանքները:

– Մեղրու տարածաշրջանի գազիֆիկացման աշխատանքներն արդեն երեք ամիս է՝ ընթացքի մեջ են: Ինչպես հայտնի է, սա իրանական դրամաշնորհ է (2 մլն դոլարի չափով), եւ աշխատանքներն իրականացնում է իրանական «Սաներջի» ընկերությունը: Հոկտեմբերին հավանաբար աշխատանքների մի մասը կավարտվի:

– Որքանով գիտենք՝ 1խմ գազի ջերմատվությունը կազմում է 7900 կիլոկալորիա՝ իբրեւ ընդունելի նորմ: Պաշտոնապես միշտ հայտարարվում է, որ մատակարարվող գազը 8000 կիլոկալորիայից ցածր չէ: Իրականում, մինչդեռ, սպառողները դժգոհ են: Քանի՞ տեղից է գազ ստանում Սյունիքի մարզը:

– Գազ մատակարարում է «Տրանսգազ» ՍՊԸ-ն, իսկ թե գազաբաշխիչ հանգույց գազ որտեղից է մտնում, չեմ կարող ասել: Մենք ռուսակա՞ն, թե՞ իրանական գազ ենք սպառում, ճշգրիտ չեմ կարող ասել: Տասը օրը մեկ պաշտոնական կայքէջից կարելի է գազի ջերմատվության վերաբերյալ ստանալ ստույգ տեղեկություն, բայց հավաստիացնում եմ, որ սպառվող գազի կալորիականությունը նորմայի սահմաններում է: Մայրաքաղաքի հետ կալորիականության տարբերությունը կարող է կազմել ընդամենը 1-2 տոկոս:

– Բայց դե ո՞վ է, ասենք, Սյունիքում դա չափում: Տեղում ունե՞նք համապատասխան լաբորատորիա, թե՞ մայրաքաղաքում է դա ստուգվում կամ միգուցե շարժական լաբորատորիաների միջոցով:

– Մեզ ամենօրյա տեղեկություններ է տրամադրում «Տրանսգազ» ՍՊ ընկերությունը: Տեղում լաբորատորիա չունենք գազի որակի եւ կալորիականության վերաբերյալ ստուգումներ կատարելու համար: Ընկերության գլխավոր մասնաճյուղում կա ինժեներական լաբորատորիա, որտեղ կատարվում են համապատասխան ստուգումներ: Շարժական լաբորատորիա նույնպես ունենք, որ պահանջելու դեպքում, օրինակ, կարող է բերվել Կապան: Խոշոր սպառողները նույնպես կարող են տեղում կատարել այդ ստուգումը, բայց դա բավականին թանկ է: Հանրապետությունում կան խոշոր սպառողներ, որոնք տեղում ունեն համապատասխան լաբորատորիա: Ձեր դիտարկումն առ այն, որ ստացվում է՝ ստուգողն էլ է նույն ընկերությունը, մատակարարողն էլ, բազմիցս տարբեր ատյաններում բարձրացվել է: Նույնիսկ մի քանի անգամ հրապարակային ստուգվել է գազի նմուշի կալորիականությունը, եւ որեւէ շեղում չի արձանագրվել: Սահմանին կատարված լաբորատոր եզրակացություններին ես լիովին վստահում եմ:

– Տարիներ շարունակ, նաեւ հիմա, անընդհատ լսում ենք, որ գազի հաշվիչներն այնքան էլ ճշգրիտ հաշվարկ չեն տալիս օգտագործվող գազի ծավալի մասին: Եվ դա, կարծեք, համընդհանուր կարծիք է, կարելի է ասել՝ գերակշռող: Ո՞ր կազմակերպությունն է հաշվիչներով զբաղվում, կա՞ անկախ մարմին, թե՞ դարձյալ «Գազպրոմ Արմենիա»-ն ինքն է իրեն վերահսկում:

– Գազի հաշվիչների 90-95%-ը ստուգվում է «Արմավիրգազմաշ» ՍՊԸ-ում, որ պայմանագիր է կնքել «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության հետ: Համապատասխան մասնագետները կատարում են ստուգաչափումն ամենաբարձր մակարդակով: Հաշվիչը մեր սեփականությունն է, բայց դրա վնասման պատասխանատուն բաժանորդն է: Հաշվիչը ստուգելու համար յուրաքանչյուր բաժանորդ կարող է դիմել, որից հետո այն կուղարկվի համապատասխան լաբորատորիա: Եթե անսարքությունը մեր գործոնով է պայմանավորված, անվճար է ստուգվում, իսկ եթե արտահերթ պետք է այն ստուգվի, բնակիչը պետք է վճարի ծառայության դիմաց: Լաբորատոր արձանագրությանը հետեւում են գործողության հետագա քայլերը:

– Արդեն արձանագրեցինք, որ Սյունիքի մարզում գործում է ավտոգազալիցքավորման 13 ճնշակայան:

Նախ՝ ո՞ր կազմակերպությունն է այդ ոլորտի գործունեությունը վերահսկում: Երկրորդ՝ ի՞նչ սկզբունքով են այդ կայաններում գազի գները սահմանվում: Երրորդ՝ կարո՞ղ ենք իմանալ, թե այսօր ինչ գներ են գործում մայրաքաղաքում եւ, ասենք, Սյունիքում: Չորրորդ. ի՞նչ գներ են ակնկալվում 2016թ. հուլիսի 1-ից հետո՝ սակագների նվազեցումից հետո:

Եվ հինգերորդ՝ ինչո՞ւ մեր մարզի մի կայանում լավ են լիցքավորում (ըստ վարորդների), մի ուրիշ տեղ՝ վատ. եւ ոչ մի վերահսկողություն կամ պատասխանատվություն:

– «Գազպրոմ Արմենիա» ընկերությունն ավտոգազալիցքավորման ճնշակայաններին միայն տրամադրում է գազ, որի դիմաց ստանում է

էջ 5

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Սյունիքի մարզային քննչական վարչությունն ունի նոր շենք

Հուլիսի 8-ին տեղի ունեցավ ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության նոր շենքի բացումը: Սա նմանատիպ քննչական կոմիտեի մարզային վարչության չորրորդ նոր շենքն է Արագածոտնի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերից հետո: Երկաթուղայիններ փողոցի 4 հասցեում գտնվող եռահարկ մասնաշենքը վերակառուցվել եւ հիմնանորոգվել է, կահավորվել, համալրվել անհրաժեշտ տեխնիկայով՝ համակարգիչներով, պատճենահանող եւ սկանավորող սարքերով, ներքին ավտոմատ հեռախոսային կայանով: Եռահարկ մասնաշենքն ունի 16 աշխատասենյակ՝ խորհրդակցությունների դահլիճ, ինչպես նաեւ նախատեսվել են առանձին սենյակներ՝ իրեղեն ապացույցների պահպանման եւ առերեսումների համար: Ընդ որում՝ մասնաշենքի առաջին երկու հարկում տեղակայված է ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունը (10 աշխատասենյակ), երկրորդ հարկում՝ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 9-րդ կայազորային քննչական բաժինը (վեց աշխատասենյակ):

Մարզային քննչական վարչության վարչական նոր շենքի բացմանը մասնակցում էին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Աղվան Հովսեփյանը, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Արամ Թամազյանը, իրավապահ ոլորտի ներկայացուցիչներ: Նրանք շրջել են շենքում, ծանոթացել աշխատանքային պայմաններին, որից հետո տեղի են ունեցել պարգեւատրումներ. ՀՀ քննչական պետական կոմիտեի Սյունիքի քննչական վարչության պետ, արդարադատության փոխգնդապետ Վահրամ Դաղունցը եւ ՀՀ քննչական պետական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 9-րդ կայազորային քննչական բաժնի պետ, արդարադատության փոխգնդապետ Գեւորգ Խալաթյանն արժանացել են «Անձնվիրություն եւ անվեհերություն» մեդալի, իսկ Սյունիքի մարզային քննչական բաժնի պետի տեղակալ, արդարադատության փոխգնդապետ Արայիկ Դարբինյանը պարգեւատրվել է «Վաստակի համար» մեդալով: Եվս երկու քննիչ արժանացան դրամական պարգեւի:

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

«Շենքն այնպիսի վիճակում էր, որ շինարարներն ասում էին՝ ավելի լավ է քանդենք, հիմքից նորը կառուցենք: Փառք Աստծո, հաջողվեց վերակառուցել եւ հիմնանորոգել: Կարծում եմ, որ լավագույն պայմաններ են ստեղծված այսօրվա քննչական ապարատում աշխատող եւ՛ քննիչների, եւ՛ օժանդակ ծառայությունների համար: Բոլորիդ համար սա պարտավորեցնող է, ձեր առջեւ դրված պահանջներն ավելի խիստ են լինելու: Յուրաքանչյուրիդ համար մի աշխատանք եմ ցանկանում», – արարողության ավարտից հետո ասել է Աղվան Հովսեփյանը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Մարզխորհրդի արտագնա նիստ Գորիսում

Սյունիքի մարզխորհրդի հերթական նիստը տեղի ունեցավ Գորիսում հուլիսի 13-ին: Ներկաները մեկ րոպե լռությամբ հոտնկայս հարգեցին 2016թ. ապրիլի քառօրյա պատերազմում զոհվածների, այդ թվում մարզի երկու գյուղապետի հիշատակը:

Սուրեն Խաչատրյանը ներկաներին իրազեկեց մարզպետարանում կատարված նոր նշանակման մասին. մարզպետարանի աշխատակազմի ղեկավար է նշանակվել Ռուդոլֆ Սարգսյանը: Վերջինս շնորհակալություն հայտնեց վստահության համար եւ ասաց, որ հնարավորը կգործադրի իր պարտականությունները պատշաճ մակարդակով կատարելու համար:

Այնուհետեւ անցան օրակարգային հարցերի քննարկմանը:

Մարզի համայնքների բյուջեների կատարման ու սեփական եկամուտների հավաքման ընթացքը ներկայացրեց մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Հովհաննիսյանը: Ըստ վարչության պետի հաղորդման՝ մարզի համայնքների 2016թ. բյուջեներով նախատեսվել են 4414303.1 հազար դրամ եկամուտներ, այդ թվում՝ սեփական եկամուտներ՝ 1425590.7 հազար դրամ: Սեփական եկամուտների վեց ամսվա համար նախատեսված 572216.8 հազար դրամի դիմաց հուլիսի 1-ի դրությամբ հավաքվել է 595130.1 հազար դրամ կամ նախատեսվածի 104 տոկոսը: Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտների գծով նախատեսված 228574.9 հազար դրամի դիմաց գանձումները կազմել են 248082.8 հազար դրամ կամ նախատեսվածի 108.5 տոկոսը: Մարզի 15 համայնքում գույքահարկի հավաքումը չի գերազանցում 50 տոկոսի սահմանը (Անտառաշատ, Եղեգ, Վանեք, Տանձավեր, Ուժանիս): Առանձին համայնքներում էլ ցածր է նաեւ հողի հարկի հավաքման արդյունքը (Տանձավեր, Բարձրավան, Բնունիս, Սոֆլու, Կարճեւան):

Մարզի 12 համայնքում վարձավճարների հավաքման տոկոսը կազմում է 50 (Խդրանց, Սրաշեն, Քարաշեն եւ այլն): Զրոյական վիճակում է մարզի 15 համայնքում տեղական տուրքերի հավաքումը:

Մարզում բերքահավաքի աշխատանքների ընթացքի եւ աշնանացանի նախապատրաստմանն էր նվիրված մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ Ս. Թանգյանի զեկուցումը: Մարզում ընթանում են խոտհնձի եւ հասկավոր մշակաբույսերի բերքահավաքի աշխատանքները: Անձրեւները խոչընդոտեցին կատարվող աշխատանքներին, ինչի արդյունքում նվազել է հեկտարի բերքատվությունը: Եկող տարվա բերքի համար մարզում արդեն մեկնարկել են աշնանացանի նախապատրաստման աշխատանքները:

Սյունիքի մարզում 2015-2016 ուստարում եւս մեծ թվով աշակերտներ մասնակցել են միասնական ավարտական քննություններին: Եթե անցած տարի մարզը տվել է 21 մեդալակիր, ապա այս տարի՝ 32: Որ մարզում աշխատանք է տարվում դասաժամի օգտակար գործողության գործակցի բարձրացման ուղղությամբ, վկայում է նաեւ հետեւյալ փաստը. այս տարի հանրապետական առարկայական օլիմպիադաների ժամանակ հինգ աշակերտ 1-ին տեղ է գրավել:

Բայց եւ այնպես, իր զեկուցման մեջ ասաց մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Հ. Ալեքսանյանը, կրթության որակի բարելավման ուղղությամբ դեռեւս խնդիրներ կան, որոնց լուծմանն էլ իրենց ուժերն են նպատակաուղղել մանկավարժական կոլեկտիվները:

Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ եւ ՀԳՄՀ վարչության պետ Ս. Ավետիսյանը ներկաներին իրազեկեց 2016թ. առաջին կիսամյակում մարզի համայնքներում իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին:

Ելույթ ունեցան Սյունիքի գյուղապետ Սամվել Սարգսյանը եւ Տաթեւի համայնքի ղեկավար Մուրադ Սիմոնյանը:

Տաթեւ համայնքն արդեն անցել է համայնքների խոշորացման ճանապարհով: Ուստի Մ. Սիմոնյանը ելույթը նվիրեց խոշորացման նախնական արդյունքներին, որոնք արդեն տեսանելի են: Վերադաս պետական մարմինների միջնորդությամբ ԱՄՆ միջազգային զարգացման հայաստանյան գրասենյակի կողմից համայնքին տրվող 404 հազար ԱՄՆ դոլար դրամաշնորհի շրջանակներում կյանքի է կոչվել համայնքի տեխնիկայի վերազինման ծրագիրը, որով ձեռք է բերվում միջհամայնքային եւ ներհամայնքային ճանապարհների վերանորոգման համար բազմաֆունկցիոնալ էքսկավատոր, գրեյդեր եւ ինքնաթափ մեքենա, հացահատիկահավաք երկու կոմբայն, աղբատար մեքենա, աղբամաններ: Նույն ծրագրով կառուցվում են Սվարանց, Տանձատափ, Քաշունի բնակավայրերի խմելու ջրի ջրագծերի առանձին հատվածներ: Կստեղծվի ՀՈԱԿ, որն էլ կզբաղվի միջհամայնքային եւ ներհամայնքային ճանապարհների սպասարկմամբ, ինչպես նաեւ աղբահանությամբ, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպմամբ: Շինուհայր գյուղում կկառուցվի մեքենատրակտորային կայան, որը համալրված կլինի տեխնիկայի ընթացիկ սպասարկումն ապահովող սարքավորումներով. ծրագիրն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցով:

Շինուհայրն ընդգրկված է գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվող ծրագրերում:

Ընթացքի մեջ են Տաթեւ գյուղում գյուղմթերքների հավաքման եւ փաթեթավորման կետի կառուցման, ինչպես եւ Հալիձորում անասունների մակատեղիների, անասնապահի կացարանի կառուցման աշխատանքները: Հարժիսում կլուծվի տարիներ ի վեր չարչրկված հարցը. գյուղը կունենա վերանորոգված դպրոց՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի շնորհիվ:

Շինուհայրում կոնկրետ գործի ուղեգիր կստանան բազմաբնակարան շենքերի տանիքների, մանկապարտեզի մասնակի նորոգումները, իսկ Խոտ գյուղը կենտրոնական ճանապարհին միացնող 1.6 կմ հատվածի ասֆալտապատումը եւ բարեկարգումն իրականություն կդառնան: Համայնքների խոշորացումից հետո անցած հինգ ամսում կառուցվել կամ նորերով են փոխարինվել խմելու ու ոռոգման ջրագծեր, կոյուղագծեր, որոշ բնակավայրերում կենցաղի տների մոտ կառուցվում են սանհանգույցներ: Հարժիսում կառուցվել է անասունների խմելու ջրագիծ, եւ կատարվել են փոսալցումներ՝ գյուղը կենտրոնական մայրուղուն միացնող ճանապարհին:

Մ. Սիմոնյանն անդրադարձավ նաեւ խնդիրներին, որոնք կենսական նշանակություն ունեն համայնքի մեջ մտնող գյուղերի համար: Որոշ բնակավայրեր գազիֆիկացված չեն, չունեն ջրահեռացման ցանցեր, ոռոգման ջրի համակարգեր:

Մարզխորհրդի աշխատանքներն ամփոփեց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը՝ մասնավորապես նշելով, որ համայնքների խոշորացման ճանապարհով ընթանալը ժամանակի հրամայականն է:

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Տնտեսություն

Կապանի լեռնահարստացման կոմբինատում նշվեց հանքագործի ու մետալուրգի օրը

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ Դ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ Դ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ



ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ Դ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Դմիտրի Ուշկով,
«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ գլխավոր տնօրեն

Ապրիլի վերջից Կապանի հանքարդյունաբերության ամենախոշոր ձեռնարկությունը՝ լեռնահարստացման կոմբինատը, դարձավ ռուսական «Պոլիմետալ» բաժնետիրական ընկերության մի մասը: «Պոլիմետալը» Հայաստանում գործունեություն է սկսել 2015թ.՝ ձեռք բերելով Մեղրու տարածաշրջանի Լիճքվազի բազմամետաղային հանքավայրը: Ընկերությունը լեռնահանքային արդյունաբերության ոլորտում աշխատում է 1998թ., որի դուստր ձեռնարկություններն աշխատում են Ռուսաստանի Դաշնության յոթ երկրամասում եւ մարզում:

Խորհրդային Միության օրոք հուլիսի երրորդ կիրակի նշվում էր հանքագործի եւ մետալուրգի տոնը, եւ ռուսական «Պոլիմետալ» ընկերությունն ըստ ամենայնի որոշել է Կապանի լեռնահարստացման կոմբինատում վերականգնել հին օրերի ավանդույթը: Համենայն դեպս, հուլիսի 17-ի կիրակի օրը կոմբինատում նշեցին մասնագիտական այդ տոնը: Ձեռնարկության հրապարակում ինքնաշեն բեմ էր կահավորվել: Հանքագործներին տոնի առթիվ առաջինը ողջերթի խոսքեր հղեց «Պոլիմետալ» բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն արտադրության գծով տեղակալ Վիտալի Սավչենկոն, ով այդ նպատակով հատուկ ժամանել էր Կապան. *«Հուսով եմ որ «Պոլիմետալը» այստեղ է եկել երկար ժամանակով, առայժմ մենք ընտելանում ենք միմյանց, տեսնում, թե ով ինչպես է աշխատում, ինչպիսի սկզբունքներ ունի: Լիահույս եմ, որ ընտելացման շրջանն արագ կանցնի, եւ կսկսենք պատասխանատու լինել մեր արած գործերի համար»:*

Հանդիսության մասնակիցներին բարեմաղթանքներ հղեց նաեւ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն Դմիտրի Ուշկովը. *«Միայն ամուր կամք ունեցողներ են աշխատում հանքարդյունաբերության ոլորտում, այն էլ վտանգավոր պայմաններում: Ուստի իմ երախտագիտության խոսքն եմ ուղղում հանքագործներին, հանքահարստացնողներին, տեխնիկներին, բոլոր նրանց, ովքեր իրենց ճակատագիրը եւ կյանքը կապել են հանքաքարի արդյունահանման եւ վերամշակման գործին՝ մինչեւ վերջնական արտադրանք: Ձեր ամուր կամքն ու բնավորությունը միայն մեր ձեռնարկությանը լավագույն արդյունքներ կապահովեն: Թող ձեզ հաջողություն ուղեկցի աշխատանքում, եւ բարեկեցություն ու խաղաղություն ձեր ընտանիքներին»:*

Այնուհետեւ անցկացվեցին կոմբինատի լավագույն աշխատակիցների պարգեւատրումներ: Բարձր վարպետության, բարեխիղճ աշխատանքի, արտադրության արդյունավետության բարձրացման գործում ներդրում ունենալու համար շնորհակալագրով պարգեւատրվեցին երկրաբանական բաժնի կեռնի տեխնիկ Արամ Մնացականյանը, էներգամեխանիկական ծառայության խառատ Յուրա Պետրոսյանը, ստորգետնյա հանքի բեռնատարի վարորդ Արինե Առաքելյանը, էներգամեխանիկական ծառայության էներգետիկ վարպետ Աշոտ Հակոբյանը, ապարաբարձիչի մեքենավար Էրիկ Աբգարյանը, հանքի ջոկատի պետ Դավիթ Աթայանը, բումերի (հորատմեքենա) մեքենավար Արամ Գեւորգյանը, հարստացուցիչ ֆաբրիկայի տեխնոլոգ Դավիթ Նավասարդյանը, հարստացուցիչ ֆաբրիկայի աղացամեքենավար Սուրեն Թամրազյանը, աշխատանքի պահպանության եւ արտադրական անվտանգության բաժնի լեռնափրկարար Արթուր Բակունցը:

> *«Պոլիմետալ» ընկերության ձեռնարկություններում անց են կացվում մասնագիտական վարպետության մրցույթներ: Կապանի լեռնահարստացման կոմբինատում էլ տոնին ընդառաջ անցկացվեցին նման մրցույթներ: Մասնագիտական վարպետության «Լավագույն մասնագետ» ապարաբարձիչների մեքենավարների մրցույթում հաղթող ճանաչվեց Արսեն Հարությունյանը, բեռնատարների վարորդների մրցույթում՝ Արմեն Հարությունյանը, հորատողների մրցույթում՝ Նելսոն Աթայանը, բումերի օպերատորների մրցույթում՝ Արամ Գեւորգյանը: Նրանց, ինչպես նաեւ երկրորդ ու երրորդ տեղը գրավածներին, հուշանվերներ հանձնվեցին:*

Հանդիսության ավարտից հետո ձեռնարկության գլխավոր տնօրեն Դմիտրի Ուշկովը պատասխանեց լրագրողների հարցերին: Անդրադառնալով կոմբինատի առաջիկա խնդիրներին՝ տեղեկացրեց, որ զարգացման կարճաժամկետ պլանի շրջանակում նախատեսվում է գնահատել կոմբինատի հանքահումքային բազան, բարձրացնել հանքի արտադրողականությունը, ինչպես նաեւ բարելավել հանքաքարից մետաղի կորզման ցուցանիշը: Այս ամենին հասնելու համար պլանավորվում է ավելացնել լեռնաերկրաբանական աշխատանքների ծավալները, հանքում իրականացնել տեխնիկական-կազմակերպչական միջոցառումներ, օժանդակ սարքավորումներով լրացնել ինչպես ստորգետնյա հանքը, այնպես էլ հանքահարստացուցիչ ֆաբրիկան: Իսկ հիմնական խնդիրն է 2017 թվականի երկրորդ կիսամյակում հարստացուցիչ ֆաբրիկայի արտադրանքի ծավալը հասցնել տարեկան 650 հազար տոննայի:

Պատասխանելով «Այունյաց երկրի»՝ ձեռնարկության տեխնիկական վերազինման մասին հարցին՝ գլխավոր տնօրենն ասաց, որ 2016 թվականի պլանը քննարկվել է հուլիսի 6-ին ընկերության ժողովում: Նախատեսվում է 15 միավոր հիմնական եւ օժանդակ տեխնիկա ներդնել ստորգետնյա հանքում ու ավելի քան 50 սարքավորում այլ տեղամասերում (հանքահարստացուցիչ ֆաբրիկա, մեխանիկական եւ էներգետիկական ծառայություններ, լաբորատորիա եւ այլն):

Կոմբինատի տեխնիկական վերազինման միջնաժամկետ պլանի համաձայն՝ օգոստոս-սեպտեմբերին պատրաստվելու է 2017-18 թթ. ձեռնարկության տեխնիկական վերազինման պլանը: Ինչ վերաբերում է «Պոլիմետալի» որդեգրած սոցիալական ծրագրերին, ընկերությունը սերտորեն համագործակցում է տեղական իշխանությունների հետ՝ հաշվի առնելով բնակչության շահերը: Տարեցտարի այդ քաղաքականությունը կոնկրետացվում է, որ բոլորին տեսանելի լինի, թե որտեղ եւ ինչ չափով են ներդրումներ արվում:

Ինչ վերաբերում է հնարավոր կրճատումներին՝ գլխավոր տնօրենը փոխանցեց, որ կրճատումներ չեն լինի, որ իրենք գնահատում են կոմբինատի ներուժը, որոնց որակավորումն ու հմտությունները հնարավորություն են ընձեռում կատարել առաջադրանքները, կմնան իրենց աշխատանքային տեղերում: Ինչ վերաբերում է վարչական ապարատին, ապա այն կհամապատասխանեցվի «Պոլիմետալ» ընկերության վարչական ապարատի կառուցվածքին, որ վաղուց արդարացրել է իրեն:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ.

«Տասը տարում մարզի բաժանորդների թիվը գրեթե կրկնապատկվել է՝ 13200-ից հասնելով մոտ 25000-ի»

էջ 3

գումար, իսկ այդ ոլորտի գործունեությունը վերահսկելու հետ որեւէ առնչություն չունի: Ինչ վերաբերում է գնագոյացման հարցերին, ապա դրա հետ նույնպես մենք կապ չունենք: Սա բիզնես է, եւ ճնշակայանի տերն է սահմանում գինը, ինչը, բնականաբար, կարող է բերել մայրաքաղաքի եւ մարզերի գների տարբերությանը: Գինը 1խմ-ի դիմաց 180-220 դրամի սահմաններում տատանվում է: Իսկ գազի սակագնի նվազեցման հետեւանքով քիչ հավանական եմ համարում ավտոգազի գնի իջեցումը, քանի որ հարկային նոր պարտավորություններ են սահմանվել ավտոգազալիցքավորման ճնշակայանների վրա, այսինքն՝ ակցիզային հարկ: Ինչ վերաբերում է վարորդների բողոքին՝ լիցքավորման որակի հետ կապված, ապա միայն կարող եմ ասել, որ գազի ճնշումը կախված է ջերմաստիճանից, օրվա պահից եւ այլն: Ըստ օրենքի՝ 200 միավոր ճնշումից ավելին, անվտանգության պայմաններից ելնելով, իրավունք չունեն լիցքավորել:

– Ի՞նչ կասեք Իրան-Հայաստան գազատարի ներկա կարգավիճակի եւ գործունեության մասին:

– Ճիշտն ասած բարձր ճնշման գազատարների մասին տեղեկություն չունեմ, գազամատակարարման եւ գազիֆիկացման մասնաճյուղերը չեն զբաղվում դրանց գործունեությամբ:

– Որքա՞ն է կազմում ընկերության տարեկան կորուստը (տեխնոլոգիական եւ առեւտրային):

– Գազի բնագավառում կորուստներ չլինել չեն կարող, ընդհանուր առմամբ կորուստի չափը (տեխնոլոգիական եւ առեւտրային) հասնում է մինչեւ 2.5%, որ նախկինում կազմում էր 4%:

Դ.գ. Ի դեպ, ապրիլյան պատերազմի օրերին «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության թվով 7000 աշխատակցի մեկ ամսվա աշխատավարձը (1 մլրդ 200 մլն դրամ) փոխանցվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը: Մեր այցելության օրը Սյունիքի ԳԳՄ տնօրեն Արթուր Խաչատրյանը պատրաստվում էր այդ օրերին զոհված սյունեցի տասներեք ընտանիքի հարազատներին փոխանցել մեկական միլիոն դրամ: Ինչպես հետագայում տեղեկացանք, գումարն արդեն հասել է հասցեատերերին:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
29 հունիսի 2016թ.

Խմբագրության կողմից

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունը շնորհավորում է Արթուր Խաչատրյանին՝ պաշտոնավարման տասնամյակի առթիվ, ցանկանում քաջառողջություն եւ հաջողություններ՝ մարզի բնակչության սպասարկման պատասխանատու գործում:

■

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ Հ.ՄԱՐԳԱՐՅԱՆԻ

Մեկնարկեց ամառային զորակոչը

Հայոց բանակի շարքերը զինակոչիկներով համալրելու գործընթացի սկիզբը զուգադիպեց Հայաստանի Հանրապետության սահմանադրության ընդունման օրվան: Կապանում զորակոչի առաջին հավաքն ավանդության համաձայն մեկնարկեց Գարեգին Նժդեհի հուշահամալիրից: Հանդիսությանը մասնակցում էին Երկրորդ աշխարհամարտի եւ թիկունքի վետերաններ, մարզային եւ քաղաքային իշխանությունների ղեկավարներ, կապանցի երկրապահներ:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Հ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Ապրիլյան պատերազմի մասնակիցներ

Սահմանադրական պարտքը կատարելուն կոչված երիտասարդներին ողջերթի խոսքեր հղեց Կապանի զինկոմ, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանը. *«Պետության անվտանգության երաշխիքը նրա զինված ուժերն են, եւ մենք հերթական անգամ համալրում ենք հայոց բանակի շարքերը մեծ Նժդեհի մասունքներն ամփոփող հուշահամալիրից, որի վերեւում զորավարի ոգին է սավառնում: Չեմ կասկածում, որ տղաները, ովքեր այստեղից մեկնում են ծառայության, հավատարիմ են լինելու Նժդեհի՝ հող հայրենին պաշտպանելու պատգամներին»:*

Ներկաները մեկ բոպե լռությամբ հարգեցին ապրիլյան պատերազմի նահատակների հիշատակը: Այնուհետեւ զինկոմը երախտագիտություն հայտնեց այն զինվորներին, ովքեր ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին զենքը ձեռքին առաջնագծում էին եւ հետ էին մղում հակառակորդի հարձակումները: Նրանցից Սամվել Սահակյանը ԼՂՀ նախագահի հրամանագրով արժանացել է «Մարտական խաչ» շքանշանի: Նա իր տանկով խոցել է թշնամու երկու տանկ, «Ուրալ» մակնիշի մի մեքենա: Զինկոմի պատվոգրով պարգեւատրվեցին նա, ինչպես նաեւ հրետանավոր Մարտուն Հովհաննիսյանը, կապավոր Օնիկ Խաչատրյանը, գնդացրորդ Ալյոշա Խաչատրյանը եւ ուրիշներ, ովքեր ընդսմին արժանացել են Անդրանիկ Օզանյանի մեդալի:

Լ.Գրիգորյանը ժամկետային զինվոր էդվին Հարությունյանի մորը հանձնեց ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյան շնորհակալագիրը: Պատվոգրով խրախուսվեց Աճանանի դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Դավիթ Սիմոնյանը՝ դաշտային պարապմունքների ժամանակ հրածգությունից բարձր արդյունքներ ցուցաբերելու համար: Զինկոմի պատվոգրին արժանացան նաեւ երկրապահ կամավորներ Դավիթ Հարությունյանը, Խաչիկ Ոսկանյանը, Սուրիկ Հովսեփյանը, ովքեր ապրիլյան պատերազմի օրերին առաջնագիծ էին մեկնել՝ սատարելու երիտասարդ զինվորներին:

Հայրենիքի ապագա պաշտպաններին անփորձանք ծառայություն եւ բարի վերադարձ մաղթեցին Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը, Կապանի վետերանների միավորման խորհրդի նախագահ Ռաֆիկ Հարությունյանը: Մեկնելուց առաջ բանակ մեկնողները ծաղիկներ դրեցին Գարեգին Նժդեհի հուշաքարին:

Ամառային զորակոչի անդրանիկ հավաքի զինակոչիկները հայրենասիրական երգերի մեղեդիների եւ ընկեր-բարեկամ-հարազատների ծափողջույնների ու բարեմաղթանքի բացականչությունների ներքո մեկնեցին կենտրոնական հավաքակայան:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սեպտեմբերի 18-ին՝ ՏԻՄ ընտրություններ մարզի որոշ համայնքներում

Ինչպես տեղեկանում ենք Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքէջից, սույն թվականի սեպտեմբերի 18-ին համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամների ընտրություններ տեղի կունենան Սյունիքի մարզի հետեւյալ՝ արդեն խոշորացված համայնքներում՝ Գորիս, Մեղրի, Գորայք եւ Տեղ: Նույն օրը ՏԻՄ ընտրություններ կկայանան նաեւ չխոշորացված Քաջարան քաղաքային համայնքում:

Սեփ. լրատվ.

Դարբասում եւ Ախլաթյանում՝ համայնքի նոր ղեկավարներ

2016թ. հուլիսի 10-ին Սիսիանի տարածաշրջանի Դարբաս եւ Ախլաթյան համայնքներում տեղի ունեցան համայնքի ղեկավարի ընտրություններ:

Ախլաթյանում առաջադրվել էր համայնքի ղեկավարի երեք թեկնածու: Ընտրողները նախապատվությունը տվել են Անաստաս Բաբայանին. կողմ ձայն՝ 110: Նորընտիր գյուղապետն առաջադրվել էր ՀՀԿ-ի կողմից, աշխատում էր արոտօգտագործողների միավորման կոոպերատիվի նախագահ:

Դարբասում համայնքի ղեկավար է ընտրվել Սաշա Ստեփանյանը (ինքնաառաջադրում)՝ ստանալով 309 ձայն: Նորընտիր գյուղապետը ԲՀԿ անդամ է, մինչ այդ աշխատում էր «Հակոբջանյան եւ Գալստյան հէկ» ՍՊԸ օպերատոր: Սաշա Ստեփանյանի մրցակիցը ՀՀԿ-ի կողմից առաջադրված Ռոբերտ Խաչատրյանն էր, ով ավելի վաղ եղել է Դարբաս համայնքի ղեկավար:

Սեփ. լրատվ.

Անհայտ, բայց ոչ անհույս

Մարդկությանը պարբերաբար ուղեկցած պատերազմների ժամանակ միշտ էլ եղել են զինվորներ, որոնց ճակատագիրն այդպես էլ մնացել է անհայտ: Դա պատերազմի դաժան, բայց չգրված օրենքն է: Բացառություն չեղավ նաեւ Արցախյան պատերազմը. սյունեցի 28 ազատամարտիկի (18-ը՝ Կապանից) ճակատագրի մասին ցայսօր ոչինչ հայտնի չէ: Բաղաբուրջի հուշահամալիրում, որտեղ հավերժական քնով ննջում են Արցախյան պատերազմի նահատակները, հուշաքար-խաչքար է կանգնեցված անհայտ ճակատագրով ազատամարտիկների հիշատակին:

Հունիսի 29-ին Կապանում նշվեց անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օրը: Մարզկենտրոնի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում օրվա խորհրդին պատշաճող հոգեհանգստյան կարգ կատարեց Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանը: Այնուհետեւ մեքենաների շարասյունն ուղղություն վերցրեց դեպի Բաղաբուրջի հուշահամալիր: Անհայտ ճակատագրով ազատամարտիկների խաչքար-հուշաքարին ծաղկեպսակներ դրվեցին մարզային եւ քաղաքային իշխանությունների, զինվորականության կողմից:

Հիշատակի խոսք հնչեցրեց Արցախյան պատերազմի օրերին 97-րդ բրիգադի 6-րդ մոտոհրաձգային (Շիկահողի) բրիգադի շտաբի նախկին պետ Սպարտակ Ստեփանյանը: Շիկահողի գումարտակի տխուր էջը 1994 թվականի հունվարի 7-ն էր, երբ հակառակորդը հանկարծակի գրոհ ձեռնարկեց մեր դիրքերի վրա, յոթ հոգի Կապանից, այդ թվում գումարտակի հրամանատար Մարտուն Բաղալյանն անհետ կորան, նրանց ճակատագիրը մինչեւ այսօր պարուրված է անհայտության մշուշով: Ս.Ստեփանյանը ցավով նշեց, որ ապրիլյան քառօրյա պատերազմում Շիկահողի գումարտակը զոհ ունեցավ՝ Գագիկ Փարսադանյան, ում աճյունը եւս ամփոփվեց Բաղաբուրջի հուշահամալիրում: Ծաղիկներ դրվեցին ապրիլյան քառօրյա պատերազմում զոհված կապանցի երեք ազատամարտիկի շիրիմներին:

> *Անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օրվան նվիրված հուշ-ցերեկույթ տեղի ունեցավ Կապանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում:*

Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանը ցավով նշեց հանգամանքը, որ թեեւ երկու տասնամյակից ավելի է, ինչ հրադադար է հաստատվել, բայց տասնյակ ընտանիքներ գտնվում են անորոշության մեջ, քանզի լուր չունեն իրենց հարազատների մասին. *«Մենք պատկերացնում ենք նրանց ընտանիքների հուզական, սոցիալական վիճակը, որպես պետական մարմին, մեր տեսադաշտում ենք պահում նման ընտանիքներին՝ նրանց հոգսերը թեթեւացնելու նպատակով: Մենք այսօր հարգեցինք նրանց հիշատակը, իսկ դրա լավագույն միջոցը մեր հոգատար վերաբերմունքն է նման ընտանիքների հանդեպ»:*

Հիշատակի խոսք ասացին Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանը, Կապանի զինկոմ, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանը, վաստակավոր ուսուցչուհի Ռոզա Քարամյանը, «Ընդդեմ իրավական կամայականությունների» հասարակական կազմակերպության նախագահ, ՀՀ պաշտպանության նախարարությանն առընթեր գերիների, պատանդների եւ անհայտ կորածների հարցերով հանձնաժողովի անդամ Լարիսա Ալավերդյանը: Զարինե Հակոբյանը, ով նույն հանձնաժողովի անդամ է, իր խոսքում այն միտքը հայտնեց, որ տղաները (խոսքն անհայտ ճակատագիր ունեցողների մասին է) չեն կորել, որ նրանք դեռեւս ռազմի դաշտում են, ասել է թե՝ հույսը վերջինն է մեռնում…

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Հոբելյան

Ճանաչված մանկավարժը, կազմակերպիչը

Իմ լավ բարեկամ եւ ավագ ընկեր Յուրի Ջավահիրյանը 70 տարեկան է: Ծնվել է 1946-ի հուլիսի 31-ին Թուրքմենիայում: Պապը, խույս տալով կուլակաթափությունից ու Սիբիր աքսորվելու տխուր հեռանկարից, մեծ պատերազմի նախօրյակին է ընտանիքով տեղափոխվել Աշխաբադ: Այստեղից էլ 1941-ին նրա որդի Գուրգենը մեկնում է ռազմաճակատ: 1943թ. ծանր վիրավորվում է, երկարատեւ բուժում ստանում Սուխումի հայտնի զինվորական հոսպիտալում, մի քանի ծանր վիրահատություններ տանում, այնտեղ թողնում աջ ձեռքն ու զորացրվում, նորից վերադառնում Թուրքմենիա: Մեկ տարի անց ամուսնանում է Մալինցյանների հայտնի տոհմից Քնարի հետ: Առաջնեկը՝ Յուրին, մեկ տարեկան չկար, երբ ընտանիքը վերադառնում է հայրենիք:

Գորիսում դժվար թե գտնվեր մեկը, որ չճանաչեր փոքրամարմին, աշխատասեր ու համառ այդ մեծ մարդուն՝ Գուրգեն Ջավահիրյանին: Ֆիզիկապես առողջ շատերն էին նրան նախանձում իր այդ հատկանիշների համար: Կարողացավ իրագործել ժողովրդի մեջ ընդունված՝ տղամարդուն բնութագրող բոլոր պահանջները՝ տուն կառուցեց, այգի հիմնեց, երեք որդի ունեցավ՝ Յուրի, Մարտուն, Ռուբիկ ու նրանց ժառանգեց իր ունեցածը՝ աշխատասիրությունը, համառությունը եւ դժվարությունների դեմ չընկրկելու ունակությունը:

Մեր հոբելյարը՝ Յուրի Ջավահիրյանը, սովորել եւ ավարտել է Գորիսի թիվ 2 միջնակարգ դպրոցը: Նրա գործունեության մեջ սովորելն ու աշխատանքը միահյուսված են եղել. սովորել է եւ աշխատել, աշխատել է ու սովորել: Թիվ 2 միջնակարգ դպրոցի աշակերտ էր, բայց եւ ղեկավարում էր դպրոցի փողային նվագախումբը, աշխատավարձ ստանում: Ինքն ավելի թեւավոր է ասում՝ ես ե՛ւ աշակերտ էի, ե՛ւ ուսուցիչ: Հետագայում էլ՝ մանկավարժական ինստիտուտում սովորելու տարիներին, ղեկավարում էր գիշերօթիկ դպրոցի փողային նվագախումբը:

Սովորելը, ուսումնառությունը յուրաքանչյուրի համար առանձնակի դերակատարում ունեն: Այն Յուրի Ջավահիրյանի կյանքում մի առանձնահատուկ տեղ է զբաղեցրել: Համարյա ամբողջ կյանքում սովորել է: Սովորել է Կրասնոդարի ծխախոտագործության բարձրագույն դպրոցում, երբ աշխատում էր Գորիսի ծխախոտի ֆերմենտացիոն գործարանում: Այնուհետեւ սովորել եւ ավարտել է Գորիսի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի ֆակուլտետը, Գորիսի հատուկ գիշերօթիկ դպրոցի ուսումնական մասի վարիչ աշխատելու տարիներին սովորել եւ ավարտել է նույն ինստիտուտի դեֆեկտոլոգիայի ֆակուլտետը, Գորիսի մշակույթի տան տնօրենի պաշտոնում աշխատելու տարիներին էլ ավարտել է Մոսկվայի Կրուպսկայայի անվան ժողովրդական համալսարանը: Վերջին տարիներին էլ, երբ աշխատում էր Որոտանի միջնակարգ դպրոցի տնօրեն, սովորեց նոր տիպի դպրոցի ղեկավարման բարդ արվեստը: Եվ այդպես շարունակ…

Անուղղակի ձեւով ակնարկեցի այն հիմնարկությունները, կազմակերպությունները, որտեղ աշխատել է Յուրի Ջավահիրյանը: Բայց նա առանձին հաճույքով է հիշում շրջանային մշակույթի տան տնօրենի եւ Գորիսի դրամատիկական թատրոնի տնօրենի պաշտոնավարումները: Նրա նախաձեռնությամբ ստեղծված ժողովրդական գործիքների համույթը մասնակցեց հանրապետական մրցույթի եւ նվաճեց ժողովրդականի կոչում: Ի դեպ, այդ տարիներին համույթի հետ սերտորեն համագործակցում էր Գուսան Աշոտը, իսկ նրա չքնաղ Արաքսյան էլ իր երգերի առաջին կատարողն էր: Այդ տարիներին էլ ավելի մերձեցավ Յուրի Ջավահիրյանի եւ Գուսանի բարեկամությունը, որով մեր հոբելյարն իրավացիորեն շատ է հպարտանում: Իսկ դրամատիկական թատրոնի տնօրենի պարտականությունները կատարելիս կարողացավ մայրաքաղաքից անվանի շատ դերասանների համոզել, բերել Գորիս, այդ թվում՝ Երվանդ Մանարյանին, նրանց համար ստեղծել աշխատանքի եւ կենցաղի նորմալ պայմաններ:

Այո, շատ կոլեկտիվներում է աշխատել, շատ կոլեկտիվներ ղեկավարել, բայց նրա սիրելի աշխատանքն ուսուցչի աշխատանքն էր, որովհետեւ կոչումով է այդպիսին:

Կոոպերատիվ շարժման տարիներին ստեղծեց «Երազ» ՍՊԸ-ն, որը զբաղվում էր տրիկոտաժեղենի արտադրությամբ: Արտադրամասում զբաղված էր 70 հոգի, եղել է Գորիսի քաղկոոպի վարչության նախագահ, քաղաքապետարանի մշակույթի, կրթության եւ առողջապահության բաժնի վարիչ: Թվարկված բոլոր աշխատանքներն էլ պատվով ու բարձր պատասխանատվությամբ է կատարել, եւ ըստ նրա՝ այդ հաջողությունները պայմանավորված են եղել իր մանկավարժ լինելու հանգամանքով: Ինչպես ասում են՝ իրեն ավելի տեսանելի է:

> *Հայ մարդու համար «ընկերը» բացարձակ արժեքներից մեկն է, այն համարյա գտնվում է ընտանիք, սեր հասկացությունների հետ միեւնույն հարթության վրա: Ասում ենք՝ ասա՝ ո՞վ է ընկերդ, ասեմ՝ թե դու ով ես, կամ՝ ինչպիսի՞ն է եղբայրս՝ չգիտեմ, հետո ընկերություն չեմ արել: Նպատակ չունեմ ընթերցողին դասախոսություն կարդալ այս թեմայով, ուղղակի ցանկանում եմ նրան մասնակից անել մտորումներիս: Ընկեր ճարել, գտնելը դժվար չէ: Այն պահելն է դժվար: Հասկանալի է, «պահելը» հասկանում ենք ոչ ուղիղ իմաստով: Ոչ մի ընկերություն միայն լավ եւ ուրախ օրերի գումար չէ, թե չէ «ընկերությունը դժվարությունների մեջ է փորձարկվում» ասացվածքը կդառնար անիմաստ:*

Այս առումով Յուրի Ջավահիրյանը երջանիկ անհատ է: Նրա ընկերությունը բռնել է ժամանակի քննությունը: Թեմայի շուրջ բազմաթիվ առիթներով ենք նրա հետ զրուցել: Կարողացել է պահել իր ընկերներին, պահել այնպես, որ նույնիսկ ընտանեկան տոնի առթիվ, ինչպիսին ծննդյան օրն է, առաջին շնորհավորանքները նա ստանում է հեռավոր մանկության օրերի ընկերներից՝ Սենիկ Հովհաննիսյանից, Համլետ Մկրտչյանից… Դժվար պահերին էլ նրանք հոբելյարի կողքին են, նրա կողքին են այնպես, ինչպես ինքն էր նրանց հետ Արցախյան շարժման առաջին փուլում, երբ տարածքում գտնվող խորհրդային զորքերից զինամթերք էին ձեռք բերում եւ Յուրիի «Ուազ» ավտոմեքենայով տեղափոխում:

Ընկերությունը վստահություն է, ապահովություն: Ընկերությունը նաեւ սեր է: Առանց դրանց հնարավոր չէ ապրել:

Կյանքը դասավորվել է այնպես, որ Յուրի Ջավահիրյանն աշխատել է մեկ տասնյակից ավելի կազմակերպություններում: Այս մասին հպանցիկ ասվեց: Վերջին աշխատանքը, որտեղից էլ անցավ կենսաթոշակի, Որոտանի միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնն էր: Տողերիս հեղինակը հոբելյարին վաղուց է ճանաչում, բայց հենց Որոտանի միջնակարգ դպրոցում համատեղ աշխատանքի ընթացքում ավելի լավ ճանաչեցի նրան: Հեռու-հեռվից իմացողների վրա նա թողնում է խստապահանջ, մի քիչ կոշտ, գուցե քիչ էլ կոպիտ մարդու տպավորություն: Որ խստապահանջ է, զգացել եմ նրա հետ համատեղ աշխատանքի ընթացքում: 2009թ., երբ ընտրվեց Որոտանի միջնակարգ դպրոցի տնօրեն, զարմացել էր, մի քիչ էլ զայրացել, որ Որոտան գետի ափին գտնվող դպրոցը նույնիսկ տեխնիկական ջուր չունի, որի պատճառով չէին գործում սանհանգույցները, մեր օրերում դպրոցը չուներ հեռախոսակապ, լուծված չէին ուսուցիչների տեղափոխման հարցը (ուսուցիչների մեծ մասը գալիս էր Գորիսից) եւ բազմաթիվ այլ հարցեր, որոնցից շատերն ուսումնական պրոցեսի հետ անմիջական կապ չունեին: Չերկարացնեմ. կազմակերպական բարձր ունակություններով մարդու վճռականությամբ մի քանի օրում լուծեց այդ հարցերը: Այո, խստապահանջ է նախ եւ առաջ իր նկատմամբ: Աշխատանքային գործունեության ընթացքում երկար ժամանակ կտրված է եղել դպրոցից, իսկ այդ ընթացքում շատ ջրեր էին հոսել, շատ բան էր փոխվել կրթության ոլորտում: Հարկավոր էր լրացնել բաց թողնվածը: Դպրոցի տնօրենին թույլատրվում է սահմանափակ քանակությամբ դասաժամեր պարապել, բայց նա հրաժարվեց դրանից եւ ամբողջ ազատ ժամանակը, նաեւ դասերից հետո, փակված էր մնում իր աշխատասենյակում՝ լրացնում բաց թողնվածը: Եվ նա հասավ իր նպատակին: Դարձավ հանրակրթական գործի լավ գիտակ: Դպրոցը համալրեց մասնագետ ուսուցիչներով, մի քանի ամիս անց բոլոր իմաստներով վերակառուցված դպրոցի մասին սկսեցին խոսել լրատվամիջոցներով, դպրոցի սաները մասնակցում էին մարզային առարկայական օլիմպիադաներին, դպրոցը դարձավ համայնքային կյանքի կենտրոնը:

> *4-րդ տարին է, ինչ անցել է կենսաթոշակի, բայց կապն աշխատանքային ընկերների, նախկին սաների հետ չի կտրել: Որպես անձնական ողբերգություն ընդունեց քառօրյա պատերազմի ժամանակ սահմանում նախկին սան Նարեկ Մկրտչյանի հերոսաբար զոհվելու գույժը: Եթե անհատը զգայուն վերաբերմունք է ցուցաբերում դիմացինին բաժին հասած դժբախտության նկատմամբ, ապա համազոր էլ ուրախանում է նրա ուրախությամբ: Ահա այսպիսին է Յուրի Ջավահիրյանը…*

«Ավրորա» մրցանակաբաշխության հանդիսավոր երեկոյի ժամանակ (24.04.16, Երեւան) հաղորդավարը մի լեգենդ պատմեց. մի երիտասարդ ամբոխի առաջ ինքնագոհ հպարտությամբ հայտարարում է, որ իր սիրտն ամենագեղեցիկն ու ամենակարեւորն է, իսկ ամբոխը գլխով հավանություն է տալիս: Տարիքն առած մի տղամարդ է առաջանում, հակադրվում նրան՝ ասելով, որ իր սիրտն ավելի գեղեցիկ է, ավելի կատարյալ, եւ բացում կուրծքը: Նրա սրտի վրա երեւում են բազում խոցված տեղեր, սպիներ… Տղամարդը բացատրում է. սպիները բարեկամների հասցրած վերքերն են, խոցված տեղերը՝ թշնամիներինը, սրտի պատվաստված մասերն էլ այն մարդկանց սրտերից են, որոնց ինքը սիրում է, որոնք էլ իրեն են սիրում, իր սրտից մի կտոր տվել է, նրանցից էլ՝ վերցրել: Ամբոխից զարմացած հարցնում են, թե ինչպես է, որ վերքերով պատված սիրտն աշխատում է: Տղամարդը պատասխանում է. այս սիրտը պետք է աշխատի այնքան ժամանակ, քանի դեռ նրա տերը նպատակներ ունի, որոնց պետք է հասնի:

Առանց վարանելու կարող եմ ասել, որ Յուրի Ջավահիրյանի սիրտն էլ այդ տեսքը կունենա…

Թող այն տպավորությունը չստեղծվի, թե նրա կյանքում ամեն ինչ ընթացել է հարթ ու խաղաղ: Ժամանակի արագընթաց քայլքը Յուրի Ջավահիրյանին էլ իր հորձանուտի մեջ է առել, եւ դրանից դուրս գալու համար ստիպված է եղել շատ դռներ ծեծել ու բացել: 80-ականներին նույնիսկ ամբողջ ընտանիքով տեղափոխվեց Երեւան, բայց չէ, չհարմարվեց: Նրա ականջներում անընդհատ հնչում էր սիրելի Գուսանի հայտնի երգի տողը՝ հրդանաք վեչ էս ծյորան: Եվ չհեռացավ…

Մի փորձ էլ անցյալ տարի կատարեց: Տեղի տալով մի քանիսի խորհրդին՝ մեկնեց Ռուսաստան, բայց միայնակ, փորձելու՝ կարո՞ղ է հարմարվել: Բայց նույնիսկ իր համառ բնավորությունն ի զորու չէր հաղթելու սրտին, իսկ սիրտը չէր կարող կտրվել մեր կախարդական ձորի քար ու քոլից: Մեկ անգամ էլ համոզվեց, որ իր սիրելի գիտության՝ ֆիզիկայի հիմնական օրենքներից մեկը՝ ձգողականության օրենքը, գործում է, բայց հակառակ տրամաբանությանը՝ ինչքան հեռանում ես, այնքան այդ ուժը մեծանում է:

Եվ վերադարձավ, որ այլեւս չհեռանա…

Հիմա նա պատրաստվում է հինգ զավակով եւ բազմաթիվ թոռներով շրջապատված տոնական սեղան նստել: Թոռների թիվն այս տարի մեկով էլ է ավելացել: Նրան պտղաբերության ու առատության աստծո՝ Անահիտի անունն են տվել:

Միանալով բազում շնորհավորանքներին՝ ես էլ նրա օջախին առատություն, խաղաղություն եմ մաղթում, իսկ իրեն՝ առողջություն եւ բազում հոգսերի թեթեւացում:

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Որոտանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ օգոստոսի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 24-ին՝ ժամը 14:00-ին, «Որոտանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում. հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ, գ. Որոտան: Տեղեկությունների համար զանգահարել՝ 093-14-89-38 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Ալվանքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերենի (10 դասաժամ), դասվարի (10 դասաժամ), ֆիզկուլտուրայի (8.6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ օգոստոսի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 24-ին՝ ժամը 14:00-ին, «Ալվանքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում. հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ, գ. Ալվանք, փ.3, շենք 16: Տեղեկությունների համար զանգահարել՝ 0286-9-52-06, 091-31-44-49 հեռախոսահամարներով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Հայտարարվում է մրցույթ՝ Սյունիքի մարզի «Հրանտ Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերենի, ֆիզկուլտուրայի ուսուցիչների թափուր տեղի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր (ըստ ՀՀ ԿԳ նախարարի՝ 2013թ. հունիսի 19-ի N 317-Ա հրամանի հավելված 1-ի) եւ բանավոր (ըստ ՀՀ ԿԳ նախարարի՝ 2013թ. հունիսի 19-ի N 317-Ա հրամանի հավելված 2-ի):

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ 2016թ. օգոստոսի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-14:00, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2016թ. օգոստոսի 24-ին, ժամը 14:00-ին Սյունիքի մարզի Հր. Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոցում, հասցեն՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Բարաբաթում թաղ., 2/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)61-22-90 կամ (0285)2-47-90 հեռախոսահամարներով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Հայտարարվում է մրցույթ՝ Սյունիքի մարզի Գեղանուշի միջնակարգ դպրոցի ֆիզիկայի, ֆիզկուլտուրայի ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ օգոստոսի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 24-ին՝ ժամը 14:00-ին, Գեղանուշի միջն. դպրոցում.

Հասցեն՝ գ. Գեղանուշ, Վերին թաղ. 4

Տեղեկությունների համար զանգահարել (0285)2-44-87 եւ 077-76-88-36 հեռախոսահամարներով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Հայտարարվում է մրցույթ՝ «Աշոտավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (19,25 ժամ) եւ ինֆորմատիկայի (9,25 ժամ) ուսուցչի թափուր տեղերի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր, ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Երկու լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ օգոստոսի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի «Աշոտավանի միջնակարգ» ՊՈԱԿ-ում:

Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 24-ին՝ ժամը 12:00-ին, «Աշոտավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում: Տեղեկությունների համար զանգահարել՝ 098 58 58 48 հեռախոսահամարով:

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԻՔԻ

Տարիներ առաջ առողջական խնդրով դիմեցի նյարդաբան Անուշ Օրբելյանին: Բժշկուհու նրբանկատ մոտեցման եւ մարդկային վերաբերմունքի մեջ այնքան ջերմություն կար, որ կարծես իր բարությամբ ավելի լավն էր դարձնում մեր փոքրիկ քաղաք Կապանը: Այս ամենը զգալով է, որ մի առիթով նրան երկտող նվիրեցի: «Միշտ չէ, որ գեղեցիկը բարի է, մինչդեռ բարին միշտ գեղեցիկ է»:

Անցան տարիներ, նյարդաբան Անուշ Օրբելյանի պաշտոնն այժմ մի քանի տող է զբաղեցնում: ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության Սյունիքի մարզի թիվ 1 բժշկասոցիալական հանձնաժողովի նախագահ: Վեց տարի է, ինչ տարին մեկ անգամ բժշկական հետազոտության համար այցելում եմ բժշկուհուն: Այս ընթացքում սպասասրահում որքա՜ն երախտագետ զրույցներ եմ լսել բժշկուհու մասին, նրա համբերատարության, լսելու բացառիկ ունակության մասին: Լսում եմ ու մտածում. որքան մեծ կամքի ուժ պիտի ունենա մարդը, որքան մարդասեր պիտի լինի, որ տարիների ընթացքում նույն համբերատարությամբ եւ հոգատարությամբ լսի մարդկանց, որ գանգատները նրա համար սովորական չդառնան, եւ յուրաքանչյուրին վերաբերվի նույն երկյուղածությամբ, նվիրվածությամբ: Իմ մտապատկերում բժշկի կերպարն այդպիսին դրոշմվեց Անուշ Օրբելյանի օրինակով:

Ես մեկն եմ այս փոքր քաղաքի բազում մարդկանցից, ովքեր շնորհակալ են այն մարդուց, որն արժանի է իր կոչմանը:

Ռամելա Մինասյան

Հարգելի քաղաքացիներ

Վերջին օրերին ՀՀ ԱԻՆ ՊՀՏԱՏ Սյունիքի մարզային հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչությունը (այսուհետ՝ տեսչություն) մարզի մի շարք ուսումնական հաստատություններից ահազանգեր է ստացել, որ ինչ-որ ինքնակոչ մարդիկ, ներկայանալով որպես «հակահրդեհային անվտանգության աշխատակիցներ», պահանջում են ձեռք բերել կրակմարիչներ՝ հակառակ դեպքում սպառնալով կիրառել խոշոր չափերի տուգանքներ: Ընդ որում, այդ կրակմարիչներն առաջարկում են ձեռք բերել իրենցից՝ խիստ բարձր գներով:

Տեսչությունը պաշտոնապես հայտարարում է, որ ՀՀ տարածքում, գործող օրենսդրությանը համապատասխան, միայն ինքն է իրականացնում օրենքով արտակարգ իրավիճակների նախարարությանը վերապահված վերահսկողական գործառույթներ եւ կիրառում պատասխանատվության միջոցներ (այդ թվում՝ վարչական տուգանքներ) հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում: Միայն տեսչությունն է իրավասու արգելելու նորմատիվ փաստաթղթերով չսահմանված, հակահրդեհային եւ տեխնիկական պահանջներին չհամապատասխանող առանձին ապրանքների (այդ թվում՝ կրակմարիչների) արտադրությունը, իրացումն ու օգտագործումը:

Հուսալի եւ պատշաճ որակի կրակմարիչներ ձեռք բերելու համար անհրաժեշտ է դիմել տեսչությանը եւ ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն եւ խորհրդատվություն:

Միաժամանակ հայտնում ենք, որ տեսչության աշխատակիցներն օբյեկտներ այցելելիս պարտադիր կրում են տարբերանշաններ եւ համազգեստ:

Հարգելի քաղաքացիներ. Ձեր անվտանգության ապահովման նպատակով, ինչպես նաեւ հրդեհային անվտանգության հարցերի վերաբերյալ սպառիչ ու որակյալ տեղեկատվություն եւ խորհրդատվություն ստանալու համար կարող եք զանգահարել 094 10 22 21 հեռախոսահամարով:

Սյունիքի մարզային հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչություն

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Գորիսի Ֆրանս-հայկական սրտաբանական կենտրոնի բուժական մասի ղեկավար, միջամտական բժիշկ-սրտաբան Կարեն Համբարձումյանին՝ կնոջս՝ Ամալյա Փարսադանյանին երկրորդ կյանք պարգեւելու, բարձր մակարդակով բժշկական ծառայություն մատուցելու, ինչպես նաեւ բժշկական ողջ անձնակազմին՝ ցուցաբերած հոգատար վերաբերմունքի համար:

ԱՐԱՐԱՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԿՈՐԵԼ Է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (պոլիտեխնիկ) 2011թ. ուս.տարվա շրջանավարտ Դավիթ Աշոտի Մկրտչյանի AB N 126808 դիպլոմը: Համարել անվավեր:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է 2 սենյականոց բնակարան, 76.35 քմ ընդհանուր մակերեսով: Հասցե՝ ք.Կապան, Մելիք-Ստեփանյան 4, 3-հարկանի շենքի 2-րդ հարկ: Ստալինյան նախագիծ, գազիֆիկացված է, վիճակը՝ բարվոք: Զանգահարել՝ (094) 766 425:

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 25.07.2016թ.: